

ԱՇԽԱՐՀԱՅՈՂԱԿ ԶԱՅԱԳԵՏԻ ԵՐԿԵՐԻ ՎԵՑՂԱՏՈՐՅԱԿԻ ՇՆՈՐՀԱՆՈՒՄԸ

Հայ տպագրության 500-ամյակի հոբելյանական տարին Երևանի պետական համալսարանում ավարտվեց դեկտեմբերի 27-ին գիտխորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցած բազմաձևատակ պատմաբան, բանասեր ու բյուզանդագետ Նիկողայոս Ադոնցի (1871-1942) Երկերի վեցհատորյակի շնորհանդեսով, որին մասնակցում էին բազմաթիվ համալսարանականներ, գիտնականներ՝ տարբեր բուհերից ու գիտահետազոտական հաստատություններից, հյուրեր՝ Սփյուռքից ու այլ վայրերից: Շնորհանդեսին ներկա էր նաև ԵՊՀ ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Յ. Սինոնյանը:

Բացման խոսքով հանդես եկավ ԵՊՀ հրատարակչության տնօրեն Պերճ Ստեփանյանը: Նա, շնորհավորելով ներկա գտնվողներին հռչակավոր գիտնականի Երկերի վեցհատորյակի հրատարակությունն ավարտելու առթիվ, նշեց, որ Ն. Ադոնցի պատմաբանասիրական կոթողային աշխատությունների նկատմամբ հետաքրքրությունը մշտապես մեծ է եղել ոչ միայն հայ, այլև օտարազգի հայագետների ու բյուզանդագետների շրջանում: Ժամանակին մեծ հայագետի Երկերի միայն մի մասն է տպագրվել առանձին գրքերով, մեծ մասը ցարդ մնացել էր ցրված աշխարհի տարբեր երկրներում լույս տեսած տարալեզու գիտական հանդեսների ու պարբերական մամուլի էջերում, իսկ զգալի մասը մնում էր անտիպ: Փաստորեն մայր հայրենիքում Երևանի պետական համալսարանն է առաջինը ձեռնարկել Ադոնցի Երկերի բազմահատոր հրատարակչության գործը, որը հայ տպագրության 500-ամյա հոբելյանի տարում պսակվել է հաջողությամբ: Խորհրդանշական է, ասաց ելույթ ունեցողը, որ խորհրդային տարիներին դարձյալ Երևանի պետական համալսարանի հրատարակչությունն է Հայաստանում առաջին անգամ հրատարակել «Армения в эпоху Юстиниана» կոթողային աշխատությունը (Երևան, 1971), որը դրանից երկու տարի առաջ (1969 թ.) անգլերեն թարգմանությամբ տպագրվել էր Լոնդոնում: Տարիներ անց (1987 թ.) Ադոնցի գլուխգործոց այս երկը թարգմանվել է հայերեն և առանձին գրքով հրատարակվել «Հայաստան» հրատարակչության կողմից: Նույն հրատարակչությունը 1972 թ. հայերեն թարգմանությամբ տպագրել էր նաև գիտնականի «Հայաստանի պատմություն» ծանրակշիռ աշխատությունը:

Շարունակելով իր խոսքը՝ Պ. Ստեփանյանը շեշտեց, որ Երևանի պետական համալսարանի հրատարակչությունն է առաջին անգամ լույս ընծայել նաև Ադոնցի «Հայկական հարցի լուծման շուրջ» հոդվածների արժեքավոր ժողովածուն (1989 թ.) անգլերենից պրոֆ. Վ. Դիլոյանի կատա-

րած թարգմանությամբ, իսկ 2002 թ. Պ. Յովհաննիսյանի աշխատասիրությամբ հրատարակել Ադոնցի «Պատկերների խնդիրը» գիրքը:

Ահա այս նախնական քայլերից հետո ԵՊՀ հրատարակչությունը «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկության սիրահոժար օժանդակությամբ 2006 թ. ձեռնամուխ եղավ «Հայկական մատենաշար»-ով Ն. Ադոնցի երկերի հինգհատորյակի հրատարակության դժվարին գործին: Ըստ այդմ՝ կազմվեց խմբագրական խորհուրդ (Ա. Յ. Սիմոնյան, Պ. Յ. Յովհաննիսյան, Ա. Գ. Մադոյան, Պ. Գ. Ստեփանյան), իսկ Ն. Ադոնցի երկերի հրատարակության պատրաստման աշխատանքը հանձնարարվեց ճանաչված ադոնցագետ, պրոֆ. Պ. Յովհաննիսյանին, որն էլ մեծ սիրով ստանձնեց ու իրականացրեց այն:

2006 թ. լույս տեսան Ադոնցի երկերի առաջին և երկրորդ հատորները, 2008 թ.՝ երրորդը, իսկ հետագա երկու տարում՝ չորրորդը և հինգերորդը: Սակայն աշխատանքի ընթացքը ցույց տվեց, շարունակեց Պ. Ստեփանյանը, որ հինգհատորյակից դուրս են մնում Ադոնցի բազմաթիվ հիմնարար աշխատություններ, որոնց թվում նաև՝ «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» մեծարժեք գործը, ինչպես և նրա հրապարակախոսությունը, բազմաթիվ հոդվածներ, նամակներ և այլ նյութեր: Ուստի ձեռնարկվեց լրացուցիչ 2 հատորի հրատարակությունը, որն ընդգրկում է ականավոր գիտնականի հրապարակախոսությունը: Սա ևս կարևոր ներդրում է հայ հասարակական-քաղաքական մտքի պատմության ուսումնասիրության բնագավառում ու հասցեագրված է մեր օրերի հայագետներին, քաղաքագետներին և ընթերցող լայն շրջաններին: Նախատեսվում է հրատարակել նաև 1 լրացուցիչ հատորը, որը կընդգրկվի Ադոնցի հիշյալ հատորներից դուրս մնացած փոքր աշխատություններն ու նամականին: Իսկ հրատարակված ներկա վեցհատորյակը վիթխարի նշանակություն ունի հայագիտության զարգացման համար: Այստեղ ընդգրկված է Ադոնցի գիտական ժառանգության մեծ մասը: Շատ գործեր առաջին անգամ են թարգմանվել հայերեն, ինչպիսին է, օրինակ՝ «Հայ-բյուզանդական նոթեր» ծավալուն ժողովածուն, որը կազմում է 6 հատորը և այլն: Պետք է ասել նաև, որ Ադոնցի երկերը հրատարակության պատրաստելու գործում իրենց ներդրումն ունեն խմբագրական խորհրդի անդամները, իսկ հատորները կազմելու, տպագրության նախապատրաստելու, առաջաբանները գրելու, ծանոթագրելու ասպարեզում վիթխարի է պրոֆ. Պ. Յովհաննիսյանի կատարած աշխատանքը:

Իր բացման խոսքը ԵՊՀ հրատարակչության տնօրենն ավարտեց սփյուռքահայ անվանի բանաստեղծ Մուշեղ Իշխանի հետևյալ գնահատանքով. «Հայաստանն իսկ էր կարծես Նիկողայոս Ադոնց: Անոր լավագույն հատկանիշներուն մարմնացումը, անոր մարդկային պատկերը: Հայ մարդ մըն էր ան՝ բառին ավանդական, արդիական և ազնվական իմաստով: Եթե կարելի է մարդու տիպարով մը բնորոշել ու երևակայել ամբողջ երկիր մը, պրոֆ. Ադոնց առաջիններեն մի՞նն է»:

Այնուհետև ելույթ ունեցավ պրոֆ. Պ. Յովհաննիսյանը, որը մասնավորապես ասաց. «Մեծարգո ներկաներ, այսօր հավաքվել ենք հարգանքի տուրք մատուցելու մեծանուն հայագետ Նիկողայոս Ադոնցի խնկելի հիշատակին: Նա իրավամբ համարվում է XX դարի ամենաականավոր հայ

պատմաբանը, համաշխարհային մեծության մի գիտնական, որի երկասիրությունները գիտական ամենախիստ չափանիշներով չափազանց բարձր գնահատված, սիրված ու փնտրված գործեր են:

Իրականություն դարձավ բազում հայազետների մեծ ու նվիրական երազանքը. այժմ սեղանին է դրված ականավոր հայազետի Երկերի վեցհատորյակը: Մահվանից երկու տարի առաջ՝ 1940 թ. սկզբներին, բարեկամներից մեկին ուղղված նամակում Ադոնցը դառնորեն խոստովանել է. «Երեք մեծ երազանքներ են ունեցել, ավա՛ղ, դրանցից և ոչ մեկը չիրականացավ. հեռանում եմ ավիստանքի և չիրականացած ծրագրերս այնպես էլ կիսատ թողած մարդու զգացողությամբ: Միշտ էլ երազել եմ երբևիցե դասավանդել հայկական համալսարանում՝ հայ ուսանողների համար, հայկական լսարանում, հայրենի հողի վրա: Երազել եմ հայրենիքս տեսնել ազատ ու անկախ, որը միայն հնարավորություն կընձեռի հայ պատմագրության, բանասիրության և լայն իմաստով՝ հայ մշակույթի բոլորանվեր զարգացմանը: Եվ վերջապես մի անհամեստ երազանք էլ եմ ունեցել՝ ի մի հավաքել տարաբնույթ ու տարալեզու ամսագրերում տպագրված ուսումնասիրություններս ու երկու հատորով հրատարակել դրանք՝ կորստից ու անհետացումից փրկելու մտադրությամբ: Ավա՛ղ, դրանցից և ոչ մեկը իրականություն չդարձավ»:

Ճիշտ է, Ադոնցը չտեսավ իր երազանքներն իրականացած, ասացելույթ ունեցողը, սակայն այսօր մենք ականատեսն ենք դրանց լինելիության. անկախ ու ազատ Հայաստանի մայր համալսարանի հրատարակչությունն իրականացրեց մեծ հայազետի Երկերի առայժմ վեցհատորյակը, որով, վստահ ենք, Ն. Ադոնցը կդառնա հայ գիտնականների բազում սերունդների գիտնական ուսուցիչն ու հայրենասեր դաստիարակը:

Ես չէ, որ պետք է խոսք ասեմ կատարված աշխատանքի մասին և տամ գնահատական, սակայն պատշաճ է, որ երախտագիտություն և շնորհակալանք հայտնենք բոլոր նրանց, ովքեր նպաստեցին իրականություն դարձնելու այս անչափ կարևոր հրատարակությունը՝ նախ Երևանի պետական համալսարանի ռեկտոր, մեծարգո Ա. Յ. Սիմոնյանին, համալսարանի հրատարակչության տնօրեն Պ. Գ. Ստեփանյանին, «Գալուստ Կյուլպենկյան» հիմնարկությանը և նրա հայկական բաժնի պատասխանատու, դոկտոր Զավեն Եկապյանին, Համազգայինի Բեյրութի գրական պահոցի պատասխանատուներին, որոնք սիրահոժար հնարավորություն ստեղծեցին ծանոթանալու Ադոնցի թողոնի նյութերին ու թույլատրեցին պատճենահանելու դրանք: Ես մեծ սիրով եմ կատարել այդ և հրատարակության հետ կապված մյուս աշխատանքները: Շուրջ ութամյա տքնաջան աշխատանքի արդյունք են ահա այս վեց ստվարածավալ հատորները, որոնք դրվել են մասնագետների ու ընթերցող լայն շրջանների տրամադրության տակ: Իսկ թե ինչպիսին են դրանք, կասեն գիտական հասարակայնությունն ու ընթերցող լայն շրջանները: Ավարտելով միտքս՝ իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում բոլորին՝ այստեղ իմ հասցեին ասված գնահատանքի խոսքերի համար»:

ԵՊՀ պատմության ֆակուլտետի դեկան, պրոֆ. Էդ. Սիմասյանն իր զեկուցման մեջ վեր հանեց Ն. Ադոնցի կյանքն ու գիտամանկավարժական-հասարակական գործունեությունը, անդրադարձավ նրա գիտական վիթ-

խարի ժառանգության խնդիրներին և հրատարակված վեցհատորյակի պարունակած աշխատություններին:

Ձեկուցողը նշեց, որ Նիկողայոս Գևորգի Ադոնցը (Տեր-Ավետիքյան) ծնվել է 1871 թ. հունվարի 10-ին ներկայիս Սյունիքի մարզի Բռնակոթ գյուղում: Նախնական կրթությունը ստացել է Տաթևի ծխական դպրոցում, Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, ապա սովորել է Թիֆլիսի ռուսական 2-րդ դասական գիմնազիայում, որն ավարտել է 1894 թ. և նույն տարում ընդունվել Սանկտ Պետերբուրգի կայսերական համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետի գրականության և արևելյան լեզուների բաժինը՝ դառնալով մեծանուն հայագետ Ն. Մառի սիրելի սաներից մեկը: 1899-ին ոսկե պարգևանշանով ավարտելով հիշյալ համալսարանը, մինչև 1902 թ. Մյունխենի, Փարիզի, Օքսֆորդի համալսարաններում և գիտական կենտրոններում խորացել է բյուզանդագիտության մեջ, պարապել է Վենետիկի և Վիեննայի Մխիթարյանների ձեռագրատներում, 1903-ին եկել է Կովկաս, Թիֆլիսում ուսումնասիրել է վրաց լեզուն, ապա հետազոտություններ է կատարել Էջմիածնի մատենադարանում: 1904-ից աշխատել է Սանկտ Պետերբուրգի համալսարանում, որտեղ և 1909 թ. պաշտպանել է մագիստրոսական թեզ՝ «Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում» թեմայով՝ ստանալով մագիստրոսի գիտական աստիճան: Այնուհետև դասախոսել է նույն համալսարանում, 1909-ից դարձել է պրիվատ-դոցենտ, իսկ 1915 թ. պաշտպանելով «Դիոնիսիոս Թրակացին և հայ մեկնիչները» թեմայով դոկտորական ատենախոսություն՝ 1916 թ. ստացել է պրոֆեսորի գիտական կոչում: Շրջագայել է Մուշում և Էրզրումում, մասնակցել է 1916 թ. կազմակերպված Վանի հնագիտական արշավախմբի աշխատանքներին: Ն. Ադոնցը դասավանդել է նաև Մոսկվայի Լազարյան ճեմարանում, եղել այդ ուսումնական հաստատության հոգաբարձու: 1920 թ. Ռուսաստանից տեղափոխվել և ապրել է Լոնդոնում ու Փարիզում, իսկ 1931-1942 թթ. դասավանդել է Բրյուսելի Ազատ համալսարանում՝ միաժամանակ ղեկավարելով նույն համալսարանի հայագիտության ամբիոնը: Նա վախճանվել է Բրյուսելում 1942 թ. հունվարի 27-ին՝ սերունդներին թողնելով գիտական վիթխարի ժառանգություն:

«Ուղիղ մեկ տարի առաջ, – ասաց զեկուցողը, – երբ ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի մի խումբ դասախոսներով մասնակցում էինք մեծ հայագետի հայրենի Բռնակոթ գյուղում Սիսիանի քաղաքապետ Ա. Հակոբջանյանի և պրոֆ. Պ. Հովհաննիսյանի նախաձեռնությամբ կազմակերպված՝ Ն. Ադոնցի ծննդյան 140-ամյակին նվիրված գիտաժողովին, հուրախություն բոլորի, պրոֆ. Պ. Հովհաննիսյանը հայտարարեց, որ 2012 թ. կհրատարակվի մեծավաստակ հետազոտողի Երկերի 2 հատորը, որով էլ կամբողջանա նրա գիտական ժառանգության մեծագույն մասը»:

Իսկապես, շարունակեց զեկուցողը, շատ կարճ ժամկետում լույս տեսան ներկա վեց հատորները, որոնք կարևոր ներդրում են ոչ միայն հայ պատմագիտության, այլև համաշխարհային գիտության ասպարեզում: Գիշտ է, քանիցս փորձել են հրատարակել Ն. Ադոնցի Երկերը, բայց դա չի հաջողվել, որովհետև Ադոնցը գրել է հայերեն, անգլերեն, ֆրանսերեն, ռուսերեն, հունարեն և այլ լեզուներով, տպագրվել է Պետերբուրգում, Փարիզում, Բրյուսելում, Լիսաբոնում, Բոստոնում, Լոնդոնում և այլուր: Խիստ

լայն ու ընդգրկուն է Ադոնցի ուսումնասիրությունների ոլորտը՝ պատմագիտություն, գրականագիտություն, լեզվաբանություն, բնագրագիտություն, առասպելաբանություն, հայ եկեղեցու և կրոնի պատմություն, արվեստի տարբեր ճյուղերի տեսություն, բյուզանդագիտություն, կովկասագիտություն և այլն: Բնական է, որ այդ ամենի հետևանքով հրատարակիչները հանդիպում էին բազմաթիվ ու բազմապիսի դժվարությունների: Բարեբախտաբար, այդ խոչընդոտներն այսօր հաղթահարվել են, և առաջին անգամ վեց հատորով հրատարակվել է ականավոր հայագետի Երկերի համահավաքը, որը, անկասկած, բացառիկ երևույթ է մեր իրականության մեջ:

Այնուհետև զեկուցողն անդրադարձավ Ադոնցի վեցհատորյակին, առանձին-առանձին ներկայացրեց յուրաքանչյուր հատորը, նրանցում զետեղված ուսումնասիրություններում արժարժված խնդիրներին և վերջում բարձր գնահատեց ԵՊՀ հրատարակչության կատարած աշխատանքը:

Երևանի համալսարանի հրատարակչությունը վերջին երկու տասնամյակների ընթացքում նկատելի ձեռքբերումներ է արձանագրել գրատպության ասպարեզում՝ ուսանողությանն ապահովելով պահանջվող դասագրքերով և ուսումնական ձեռնարկներով, իր ելույթում ասաց «Հայագիտակ» հրատարակչության հիմնադիր-տնօրեն Ա. Իսոյանը: Նա միաժամանակ նշեց, որ ուսումնական գրականության հետ մեկտեղ այստեղ լույս են ընծայվել բազմաթիվ արժեքավոր մենագրություններ ու բառարաններ, ինչպես և պատմաբանասիրական բնույթի մնայուն աշխատություններ: Վերջիններիս թվին պետք է դասել նաև Ն. Ադոնցի Երկերի վեցհատորյակը, որը հայ մշակույթի անկապտելի մասն է կազմելու այսուհետև:

Շուրջ մեկուկես տասնամյակ առաջ, այնուհետև ասաց ելույթ ունեցողը, մեր հրատարակչությունը Հայագիտական բարեգործական ընկերության հետ մեկտեղ նախաձեռնեց Ադոնցի Երկերի քառահատորյակի հրատարակության գործը: Համաձայն մշակված ծրագրի՝ առաջին հատորը ներկայացնելու էր Հայկական հարցին և Հայոց ցեղասպանությանը նվիրված նրա ուսումնասիրությունները: Մյուս հատորներում տեղ էին գտնելու գիտնականի այն աշխատանքները, որոնք ժամանակին տպագրվել էին ֆրանսերեն և գրեթե անծանոթ մնացել հայ ընթերցողներին: Սակայն, ցավոք, ձեռնարկված այդ լավ գործը մնաց անավարտ: 1996-ին լույս տեսավ քառահատորյակի առաջին հատորը միայն՝ «Հայկական հարցը», որը խնամքով կազմել ու ծանոթագրել էր Պ. Հովհաննիսյանը: Արդ, ուրախալի է, որ, թեպետև ուշացումով, Ն. Ադոնցի գիտական ժառանգությունը գրեթե ամբողջությամբ հրատարակել է Երևանի համալսարանը: Բոլոր հատորները բովանդակության առումով կազմված են գիտական պատշաճ մակարդակով և գրեթե անթերի են, իր ելույթի վերջում ավելացրեց Ա. Իսոյանը, սակայն ցանկալի կլիներ, որ արտաքին տեսքով ևս դրանք լինեին ճոխ:

«Բանքեր Երևանի համալսարանի» հանդեսի գլխավոր խմբագիր, փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հր. Միրզոյանն իր ելույթում անդրադարձավ հայ գրատպության 500-ամյա հոբելյանին, նշեց, որ գրատպության յուրացումը հայերի կողմից վիթխարի նշանակություն ունեցավ ոչ միայն անցյալի մեր մշակութային արժեքները մեր և այլ ժողովուրդների սեփականությունը դարձնելու համար, այլև յուրացնելու այլ ժողովուրդների ու երկրների գիտական և մշակութային արժեքները: Հատ-

կանչական է, շեշտեց ելույթ ունեցողը, որ մեծամուն հայագետ Նիկողայոս Ադոնցի գիտական հարուստ ժառանգությունը, թեկուզ ուշացունով, մեր գիտական հասարակության և ընթերցող լայն զանգվածների սեփականությունն է դառնում հենց հայ գրատպության 500-ամյակի տոնակատարության և Երևանը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից գրքի համաշխարհային մայրաքաղաք հռչակելու կարևոր իրադարձության շրջանակներում:

Ադոնցը հայազգի այն հազվագյուտ հայագետներից է, այնուհետև ասաց պրոֆեսոր Յր. Միրզոյանը, որը, կրթություն և գիտական մկրտություն ստանալով օտար երկրներում, ապրելով ու ստեղծագործելով հայրենիքից հեռու՝ օտար գիտական միջավայրում, մինչև կյանքի վերջը հավատարիմ մնալով գիտականության ամենաբարձր սկզբունքներին, միաժամանակ հանդես եկավ որպես մեծագույն հայրենասեր՝ դույզն-իսկ չմեղանչելով ո՛չ գիտականության, ո՛չ հայրենասիրության հարցում, ի տարբերություն շատ շատերի: Այդ է պատճառը, որ իբրև գիտնական նա հարգված ու գնահատված էր թե՛ օտարների և թե՛ հայրենակիցների կողմից ու այսօր էլ մնում է այդպիսին:

Վստահ եմ, որ մեծամուն հայագետի Երկերի բազմահատորյա այս հրատարակությունը, որ իրականացվել է պրոֆ. Պ. Հովհաննիսյանի անձնավեր աշխատանքով, դեռ երկա՛ր, շատ երկա՛ր է շարունակելու գիտականության ու հայրենասիրության անգերազանցելի դասեր տալ նորանոր սերունդների: Ուստի, օգտվելով պատեհ առիթից, իր խոսքի վերջում նշեց պրոֆ. Յր. Միրզոյանը, խորին շնորհակալությունս եմ հայտնում համալսարանի ռեկտորատին, հրատարակչությանը և հատկապես իմ շնորհաշատ սան, պրոֆ. Պ. Հովհաննիսյանին, ինչպես այս մեծարժեք հրատարակությունն իրականացնելու, այնպես էլ ներկա շնորհանդեսը կազմակերպելու համար, որը, լինելով հայ գրատպության 500-ամյակի տոնակատարության ըստ էության վերջին ակորդը համալսարանի կամարների տակ, մեծագույն նվեր է մեզանից յուրաքանչյուրին՝ գալիք Ամանորի շեմին:

Իր հակիրճ ելույթում ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի հայ գրականության պատմության ամբիոնի դոցենտ Խ. Վարդանյանը խոսեց Ն. Ադոնցի՝ հայ ժողովրդական բանավոր ստեղծագործությանն ու ավանդություններին նվիրված աշխատությունների մասին և շեշտեց, որ այդ բնույթի ուսումնասիրությունների շարքում առանձնանում են հայազգի մեծ հայագետի «Արա Գեղեցիկ»-ին նվիրված երկու աշխատություն, որոնք գրված են բանագետի խոր դիտողականությամբ ու գիտական բարձր մակարդակով: Նկատի ունենալով Ն. Ադոնցի նշված ուսումնասիրություններն ու այդ բնույթի այլ աշխատանքներ՝ ելույթ ունեցողը հավաստեց, որ Ն. Ադոնցը, խոշոր պատմաբան լինելուց բացի, նաև գրականության պատմության ու դիցաբանության հրաշալի մասնագետ է:

Շնորհանդեսին ներկա էր և ելույթով հանդես եկավ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Մելքոնյանը: Նա բարձր գնահատեց ԵՊՀ հրատարակչության կատարած աշխատանքը հայ մեծամուն պատմաբան ու բյուզանդագետ Ն. Ադոնցի Երկերի վեցհատորյակը հրատարակելու ուղղությամբ և անդրադարձավ մեծ գիտնականի թողած բարերար ազդեցությանը հայ պատմագրության հետագա զարգացման վրա: Նա խոսեց նաև Ադոնցի Երկերի տարբեր լեզուներով հրա-

տարակուսությունների աշխարհագրական ցրվածության մասին: Եվ ապա շնորհավորեց բոլոր համալսարանականներին նման արժեքավոր բազմահատորյակ տպագրելու առիթով:

ԵՊՀ հրատարակչության կատարածը մի մնայուն գործ է, որն ըստ ամենայնի պատշաճում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից Երևանը գրքի համաշխարհային մայրաքաղաք հռչակելու խոշոր իրադարձությանը և կարելի է համարել այդ մեծարանքին արժանի նվերներից մեկը, իր ելույթի վերջում ասաց պրոֆ. Ա. Մելքոնյանը:

Վերջում տեղի ունեցավ ընդունելություն, և ներկաները նվեր ստացան ԵՊՀ հրատարակչության լույս ընծայած մի շարք արժեքավոր հայագիտական գրքեր, այդ թվում նաև՝ Նիկողայոս Ադոնցի Երկերի տարբեր հատորներ:

ՎԼԱԴԻՄԻՐ ՄԱՂԱԼՅԱՆ